Ղ. ԱՂԱՅԱՆԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Ա. Ն. ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆ

Ղազարոս Աղայանը ականավոր գրող լինելուց բացի, հանդես է եկել բազմաթիվ հրապարակախոսական հոդվածներով, լեզվաբանության, մանկավարժության և փիլիսոփայական հարցերի շուրջը գրել է արժեքավոր նամակներ ու աշխատություններ, որոնք ուրույն տեղ են գրավում հայ մանկավարժության, լեզվաբանության և փիլիսոփայության պատմության մեջ։ Սակայն, դժբախտաբար, Աղայանի թե՛ մանկավարժական ու լեզվաբանական և թե՛, մանավանդ, փիլիսոփայական հայացքները պատշաճ կերպով չեն ուսումնասիրված։

Ոգևորված մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատներ Բելինսկու, Գերցենի, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Նալբանդյանի և նշանավոր ռուս լուսավորիչ-մանկավարժ Ուշինսկու գաղափարներով, Աղայանը նվիրվում է հայ ժողովրդի լուսավորության ու կրթության գործին։ Ղ. Աղայանի աշխարհայացքի ճիշտ գնահատման խնդրում այսօր էլ մեզ համար մարքսիստական արժեքավոր փաստաթուղթ է Ստեփան Շահումյանի՝ Ղ. Աղայանի գրական գործունեության 40-ամյակին նվիրված ճառը։ Այս հոդվածը մի փորձ է՝ տալու Աղայանի սոցիոլոգիական և փիլիսոփայական հայացքների մի քանի կողմերի համառոտ գնահատականը։

Ղ. Աղայանը, իր առաջադեմ աշխարհայացքով մի գլուխ բարձր լինելով ժամանակի բուրժուական ինտելիգենցիայից, XIX դարի հայ իրականության պայմաններում, այնուամենայնիվ, չկարողացավ վերջնականապես ազատագրվել իդեալիզմի կապանքներից և, չնայած իր մի շարք մատերիալիստական ճիշտ դրույթներին, հանդես գալ որպես հետևողական մատերիալիստ։

Եթե սկզբնական շրջանում Ղ. Աղայանը, համապատասխան բնագիտական գիտելիքներ չունենալու պատճառով և հետևելով Դարվինին, նրա պես չէր ընդունում հատկությունների ժառանգականությունը, ապա հետագայում, ընթերցելով Դարվինին, Ֆոխտին, Հելմհոլցին և ծանոթանալով գիտության նվաճումներին, համոզվում է, որ Դարվինը սխալվել է, երբ ժխտել է հատկությունների ժառանգականությունը։ «Դարվինը չէր ընդունում հատկությունների ժառանգականությունը,— գրել է Աղայանը,— ես էլ ինձ իրավունք չէի համարում չհավատալ, բայց հետո այդ խնդիրը շատ արծարծվեց և պարզվեց, այնպես որ՝ եթե Դարվինը ողջ մնար, կխոստովաներ իր սխալը։ Սրա պատճառն այն էր, որ բնական գիտությունները դեռ նոր էին ծլում և ծաղկում։ Համալսարանի բնական պատմության բաժնի ուսանողները ոչ մի մտավոր սնունդ չէին ստանում, այժմյան գիտություն չկար։ Դարվին, Ֆոխտ, Հելմհոլց և ուրիշ շատերը նոր էին ծանոթացվում ռուսաց գրականության մեջ և այն էլ ոչ ամբողջապես, այլ քաղվածքով միայն կամ կտոր-կտոր»[1]։

Սակայն ինչպես ինքը՝ Աղայանն է խոստովանում «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» մեմուարում[2], փիլիսոփայական այդ կարևոր հարցերն իրենց հետագա արտացոլումը չեն գտնում իր աշխատություններում և նրա արտահայտած մատերիալիստական մտքերը էջմիածնի հոգևոր դրաքննության պահանջով ջնջվում են։ Եվ բոլորովին էլ պատահական չէր, որ Աղայանը փիլիսոփայության հիմնական հարցի լուծմանը մոտենում էր զուտ նոմինալիստական դիրքերից։ Այն հարցին, թե ո՞րն է առաջնային՝ առարկա՞ն, թե՞ իր անունը, Աղայանը պատասխանել է. «Անշուշտ, առարկան նախադույն է, թեև արժանահիշատակ Մխիթարյանք գաղափարը բուն Պղատոնի, առարկայից նախադույն էին համարում»[3]։ Կասկածից դուրս է, որ Աղայանը խուսա-

---

1 Ղ. Աղայան, Երկեր, հատ. 3, էջ 147։

2 Նույն տեղում, էջ 117։

3 Նույն տեղում, էջ 250։

փել է այդ հարցի արմատական լուծումից, ցուցաբերելով իր անհետևողականությունը։ «Խորհրդածություն դաստիարակության վերա» աշխատությունում (1869) ավելի ակնառու են Ագայանի իդեալիստական հակումները, նրա կարծիքների հակասականությունը։ Խոսելով մարդու հոգեկան ու ֆիզիկական կողմերի միասնության մասին, նա գրում է. «Մարդը, ըստ ներքնույն, դանագանվում է անասունից յուր անմահ հոգովը և բանականությամբը։ Բանականության սկզբնապատճառը նորա միտքն է, որ է հավարումն տպավորությանց արտաքուստ ի ձևոն ներքին և արտաքին զգայարանաց, իսկ հոգին մարմնո կենդանությունն է և նորա սկիզբն ու վախճանը, որ ծագում է աստծուց և դառնում դարձյալ դեպի նա։ Ասել է, թե մարդը ունի մարմին, հոգի և միտք և զորա երեքը ի միասին են կազմում մարդուս ամբողջ գոյությունը»[4]։

Ագայանի տատանումները իդեալիզմի և մատերիալիզմի միջև, անշուշտ, խոսում են նրա աշխարհայացքի թույլ կողմերի մասին։ Սակայն Ագայանի արտահայտած առողջ մտքերը ցույց են տալիս, որ նա ամեն կերպ աշխատել է հեռանալ իդեալիզմից և միստիկայից։ Այդ երևույթը հատկապես նկատվում է փիլիսոփայական այնպիսի հարցերի առնչությամբ, ինչպիսիք են իմացության տեսությունը, էթիկան և էսթետիկան։ Ագայանը հանդես է գալիս որպես սենսուալիստ-մատերիալիստ։ Նա բնդգծում է, որ հոգին ենթակա է բնության և բոլոր նյութերն ու երևույթները ենթակա են բնության զործող բնդհանուր օրենքներին։ Մարդու հոգեկան գործունեությունը Ագայանը վերագրել է մարդու ուղեղին, դրանով իսկ դիտակցությունը ենթակա է դարձրել նյութական սուբստրատին։ Ճիշտ մոտենալով փորձի դերի նշանակությանը, նա միաժամանակ առաջադրում է զգայական և բանական ճանաչման միասնականությունը։ Այսպիսով, որպես ճանաչողության աղբյուր Ագայանը ընդունում է ոչ թե տրամաբանորեն հիմնավորված միտքը, այլ փորձը։ «Փորձ, զգայարանք և միտք,—գրում է նա,—այնպես կախում ունեն միմյանցից, որ առանց մինի մյուսը ոչինչ է։ Փորձերը տպավորվում են զգայարանաց վրա, զգայարանքներն այդ տպավորությունը հաղորդում են մտքի այս կամ այն հատկությանը, որով նորա սկսում են աճել ու զարգանալ»։ Այնուհետև, զարգացնելով վերոհիշյալ միտքը, Ագայանը շարունակում է. «Զենք սիալվիլ, եթե ասենք ես, թե զգայարանաց հաղորդությունքը տպավորվում են ուղեղի վրա։ Հարմանալի չէ ամենեին, եթե ուղեղը, որ նուրբ ջիղերով կապակից է մարմնո բոլոր մասերի հետ, իր զարմանալի շինվածքին համեմատ, ունենա և զարմանալի հատկություն, այսինքն տպավորել յուր վերա զգայարանաց հաղորդությունքը և նոցա միմյանց հետ համեմատելով կազմել հասկացողություն»։ Ագայանը առանց երկմտելու ընդունել է արտաքին աշխարհի ներգործությունը մեր զգայարանների վրա, օբյեկտիվ աշխարհը պատկերացնելով որպես մեր ճանաչողության միակ աղբյուրը, մրաժամանակ մտածողությունը նույնպես համարելով տեսակ իրականության ներգործության արդյունք։ Այսպիսով, փորձ հասկացողությունը Ագայանը մեկնաբանել է հայեցողական ոգով։

Ագայանը խորապես հավատացել է մարդուն՝ բնությունը ճանաչելու ընդունակություններին։ Նա գրել է. «Մարդուս մտքի զարգացումը ընդհատումն չունի, չկա մի նշանակյալ կետ, որու վրա կարելի լինի կանգ առնել»[6]։ Ագայանը ֆրանսիական մեծ փիլիսոփա Ռենե Դեկարտի նման պահանջել է սկեպտիկորեն վերաբերվել հակադիտական, միստիկական հասկացողություններին և ոչ մի սահման չդնել կասկածի առաջ։ «Արությունն և Մանվելը» վեպում այս առթիվ նա գրել է. «Ազատ մտածելու առաջին քայլը երկմտելն է։ Մարդ մինչև չերկմտի, թե ուղիղ է արդյոք իր այս կամ այն համոզմունքը, չի էլ կարող նրա սուտն ու ճշմարիտը իմանալ։ Երկմտությունը — շարունակում է Ագայանը,—անխնա բարուբանդ է անում դարերով սրբացած մի մտավոր ու բարոյական աշխարհի բոլոր խախուտ շենքերը»[7]։ Սակայն Ագայանի սկեպտիցիզմը առողջ սկեպտիցիզմ է, քանի որ այն ուղղված է միջնադարյան սխոլաստիկ դաղափարախոսության դեմ ուշմարտությանը հասնելու ճանապարհը, Ագայանի պատկերացումով, հնարավոր է անցնել, թեև այն կապված է հազար ու մի խոչընդոտների և դժվարությունների հետ. «Ինչ որ մեր մտքովը չի անցել, կանցնի մի ուրիշի մտքով և լույսի պես կտարածվի ամենի վրա։ Ինչ որ այսօր անհնարին է, վաղը հնարավոր է դառնում, որովհետև այդ հնարը եթե մի աշխարհում չի գտնվում, գտնվում է մի այլ աշխարհում և դառնում է ամենի սեփականությունը»[8]։ Այս ըմբռնումից էլ-

---

[4] Ղ. Ագայան, Երկեր, հատ. 4, էջ 10։
[5] Նույն տեղում, էջ 29։
[6] Նույն տեղում, էջ 30։
[7] Ղ. Ագայան, Արություն և Մանվել, էջ 90—91։
[8] Ղ. Ագայան, Երկեր, հատ. 4, էջ 30։

նելով, Աղայանը կոչ է արել գիտնականներին «գտնելու բնության ընդհանուր օրենքները և կյանքի երևույթները»[9]։

Հենվելով Մ. Նալբանդյանի այն գրույթի վրա, թե «գիտությունը բուն գաղափարից սկսել կարելի չէ, վասնզի մարդուս խելքը կարող չէ (ուղղակի) գերզգայական առարկաների լինելիությունը հաստատել», Աղայանը գտնում է, որ ճանաչողությունը կարող է առաջանալ միայն ու միայն փորձից[10]։ Դրանով իսկ նա հանդես է գալիս ինտուիտիվ ճանաչողության թեորիայի դեմ։

1860-ական թթ. Աղայանը, լինելով կրոնական «Արարատ» ամսագրի խմբագիրը, փորձում է նրան տալ նոր ուղղություն։ «Արարատն» իմ ձեռքերում,—գրել է Աղայանը,—կրոնական գրոշմ չէր կրում իր վրա, բարոյակրթական էր և զարգացուցիչ»[11]։ Աղայանն օգտագործում էր հոգևորականության օրգանը և այնտեղ տպագրում փիլիսոփայական բնույթ կրող իր հոդվածները, խարազանելով միաբանությանը, որը «երեսի քրտինքով հաց ուտելու սովոր չէր, չէր աշխատում, չէր սովորում, չէր ինքնակրթվում»[12]։ Եվ բոլորովին էլ պատահական չէր, որ Այվազովսկին, իր ռեակցիոն հայացքներով հիմնովին տարբերվելով նշանավոր ծովանկարիչ եղբորից, շատ խիստ հետևություններ է կատարել Ղ. Աղայանի հակակրոնական հոդվածներից. «Այս թշվառ հոդվածը (խոսքը «Խորհրդածություն դաստիարակության վերա» հոդվածի մասին է— Ա. Ա.) իմ կրոնական գաղափարները ձգել տվավ կասկածի տակ»։ Այդ առիթով Այվազովսկին Պետրոս եպիսկոպոսին ասել էր. «Արարատում» անաստված բաներ են տպվում, իսկ վեհափառը դրա վրա ուշադրություն չի դարձնում»[13]։

Բացահայտելով հոգևորականության բոլոր մութ կողմերը, Աղայանը համարձակորեն ցույց է տալիս, որ հոգևորականությունը ոչ միայն դեմ է եղել գիտությանն ու լուսավորությանը, այլև ձգտել է «զրկել մարդկանց խելքից և առողջ դատողությունից, կեղծիքը ցույց տալ որպես ճշմարտություն, իսկ ճշմարտությունը՝ որպես կեղծիք»[14]։ Աղայանը խարազանում էր հոգևորականների անբարոյական արարքները, նրանց գործադրած անօրինականությունն ու բարոյալքվածությունը, մերկացնում գիտության, լուսավորության, աշխարհիկ լեզվի և գրականության նկատմամբ ցուցաբերած նրանց թշնամական վերաբերմունքն ու տգիտությունը։ Նա գտնում էր, որ կրոնի միակ խնդիրը ժողովրդին մոլորության մեջ պահելն է։ Աղայանին ուղղված նամակներից մեկում Եղեկյանը գրում էր. «Ընդունելով առաքինություն, գյուցազնություն, որոնք կրոնի հիմունքն են, չեմ կարող համամիտ գտնվել քեզ հետ, թե ժողովրդին մոլորության մեջ պահելը կրոն ասած բանի միակ պահանջը լինի։ Բայց թե նենգավոր կրոնապաշտների պահանջն է այդ, դրան լիովին համաձայն եմ»[15]։

Աղայանը գտնում էր, որ եկեղեցականներին չէ, որ պիտի հետևի հայ ազգը, այլ աշխարհիկ մտավորականությանը, որն ազգի կրթողն է հանդիսանում, մատակարարում է նրան արվեստ և գիտություն, որոնցից «իրավազուրկ է եկեղեցական դասակարգը իր կաթողիկոսներով ու պատրիարքներով»[16]։ 1909 թ. գրած «Գլո՞ւխ, թե գլխարկ» բանաստեղծության մեջ՝ նվիրված Ս. Սամիկոնյանին, որը այն ժամանակ Թիֆլիս էր եկել ու ժողովներ էր գումարել տալիս կաթողիկոսական հարցի առթիվ, նա ասում է.

Երբ որ ընտրության լինեք ձեռնամուխ,
Դուք գլխարկ կընտրեք և ոչ թե գլուխ,
Ի՞նչ է վիզարը, եթե ոչ գլխարկ,
Որ պարփակում է մի գլուխ դատարկ։

Ղ. Աղայան, Երկեր, հատ. 3, էջ 91։

10 «Տարազ», 1893, № 4։

11 Ղ. Աղայան, Երկեր, հատ. 3, էջ 118։

12 Նույն տեղում, էջ 116։

13 Նույն տեղում, էջ 118։

14 «Գրական ժառանգություն», էջ 426։

15 Հայկական ՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարան, Ղ. Աղայանի արխիվ, գործ № 304։

16 Նույն տեղում, գործ № 65։

Կուզեք ընտրեցեք մի աշխարհական,
Թող լինի անգամ մի մեծ գիտնական,
Բայց չէ՞ որ նա էլ վեղար պիտ կրի,
Եվ ինչ որ սև է՝ նրան համակրի։
Ուրեմն էլ ի՞նչ մտմտալ իզուր
Թե վեղարներից որն է բութ կամ սուր...[17]։

Աղայանի պնդումով եկեղեցական դասակարգը միշտ արգելք է հանդիսացել «ազգային քաղաքակրթության հառաջադիմության և ազատության շարժման հարցերում»[18]։

Աղայանը ցույց է տվել նաև, որ կրոնն ու եկեղեցին ծառայել են տիրողներին՝ իրը բռնության գործիք։ Նա գրել է. «Պետք է գիտենաս, թե քուրմ է եղել, թե հրաշագործ, թագավորի հրամանով են անում, ինչ որ անում են, իսկ թագավորը նրանց գործ է դնում իր օգտին»[19]։ Ուշադրության արժանի է, որ Աղայանը աստծուն «անգութ մովրով» է անվանել։ Նա կրկնել է Թադիադյանի ծաղրը թքամանը թանաքաման դարձնելու մասին։ Ավելին՝ ուժեղացնելով այդ ծաղրը, նա ասում էր, թե իր օրով տեսել է, որ «վեհարանում» թքամանը թագավոր է դառել, խաչդողներին գերազանցելով և ինքը՝ Աղայանը ընկել է իսկական թզուկների աշխարհը[20]։ Այդ թզուկների աշխարհում հալածվում է իսկական գիտությունը և պաշտպանվում է «մթնարանությունը» խակակիրթ արեղաների կողմից։

«Ժամանակակից ատենախոսություն» աշխատության մեջ, կանգ առնելով գիտության և կրոնի հարաբերակցության հարցի վրա, Աղայանը գտնում է, որ կրոնը, իրրև մի հոգևորական երևույթ, իրրև երևակայության ու հավատքի արդյունք, հետազոտելի ու ուսումնասիրելի առարկա է և ոչ թե հետազոտող և ուսումնասիրող։ Ըստ Աղայանի, ուսումնասիրող առարկան գիտությունն է, որ «խելքի, փորձառության և հանճարի արդյունք է և ոչ հավատի»[21]։ Աղայանը գիտությունը բարձր էր դասում կրոնից՝ գտնելով, որ «մարդու միտքը հսկայական քայլերով զարգանալով... ետ է թողնում իրանից կրոնը, իր բոլոր հավատալիքներով»։ Նշելով, որ եթե առաջ մարդիկ իրենց փրկությունը կրոնի մեջ էին որոնում, ապա այսօր ապավինում են գիտությանը, Աղայանը միևնույն ժամանակ խարազանում էր քահանաներին և մյուս եկեղեցականներին, ցույց տալիս, որ կրոնը դարձել է ժողովրդին կեղեքելու միջոց։ «Այսօր,—գրում էր նա,—այլևս կրոնի ետևից վազող չկա հոգու փրկության համար և եթե կան, այդ միայն մարմնի համար է, բարեկեցության համար է և ոչ երբեք հոգու փրկության»[22]։ Սակայն կրոնի հարցում ևս Աղայանը դրսևորեց իր անհետևողականությունը։ Նա չկարողացավ բարձրանալ մինչև աթեիստական դիրքերը և սկզբնական շրջանում նույնիսկ քարոզում էր գիտության ու կրոնի հաշտություն, ներդաշնակություն, չնայած, որ բազմիցս նշել է գիտության գերազանցությունը կրոնի հանդեպ։ Աղայանը շատ անգամ պաշտպանել է «հայոց եկեղեցին» կրոնի հետ կապ չունեցող քաղաքական նպատակներով։ Բարխուդարյանին գրած նամակում նա այն միտքն է հայտնում, որ «այսօր կրոնին չի կարելի նայել կրոնական դիրքերից, այլ հարկավոր է նայել միայն քաղաքական դիրքերից»[23]։

Աղայանը ծաղրել է թեոլոգների անտրոպոմորֆիստական պատկերացումները. «...Աստված մարդ չէ, մարդկային ոչ մի հատկություն չունի, նա ոչ մարմնեղն է և ոչ օդեղեն, նա չունի ոչ ականջ, ոչ լեզու, ոչ աչք և ոչ ձեռք։ Նա ոչ տալիս է և ոչ առնում, ոչ լսում է և ոչ խոսում։ Ամենից մեծ հիմարությունը, որ մարդն ունի, այդ այն է, որ իր ստեղծողի մասին ճիշտ գաղափար չունի»[24]։ Սակայն նման խիստ բացասական վերաբերմունքը աստուծո նկատմամբ դեռ չի նշանակում, թե Աղայանը ամբողջությամբ բացասում է նրա գոյության գաղափարը։ Այս հարցում Աղայանի մոտ մենք գտնում ենք ավելի շուտ դեիստական մոտեցում։ Ահա «Երենք» բանաստեղծությունը, որտեղ նա պաշտպանում է Կոպերնիկոսի դեոցենտրիկ կոնցեպցիան.

---

17 «Մամուլ», Թիֆլիս, 1911, № 6։

18 Հայկական ՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարան, Ղ. Աղայանի արխիվ, գործ № 65։

19 Ղ. Աղայան, Հեքիաթներ, էջ 208։

20 Ղ. Աղայան, Երկեր, հատ. 3, էջ 131։

21 Ղ. Աղայան, Ժամանակակից ատենախոսություն, էջ 26։

22 Նույն տեղում։

23 «Գրական ժառանգություն», էջ 562։

24 «Սովետական գրականություն», 1941, № 3։

Մեր երկրագունդը
Արևի մասն է,
Նրա ծնունդը։

Ո՞նչ կա աշխարհումս,
Որ իր ծագումը
Արևից չառներ,
Որ նրա լույսից
Ու ջերմությունից
Կախում չունենար։

Ցով է, թե ցամաք,
Սար է, թե անտառ,
Շեն, թե անապատ,

Ամեն, ամեն ինչ
Նրան է նայում,
Նրան հետևում։

—Բայց ինչո՞ւ աստված
Երկրի խնամքը
Հանձնել է այդպես
Մի արևիկի...
—Այդպես է աստված...
Նա տիեզերքի
Անհունության մեջ
Ծածկել է իրան։

Իսկ իր ստեղծած
Արեգակներին
Իրավունք տվել
Ինքնավարության։

Օրենք է դրել
Տիեզերական.
Ոչ մի ստեղծած
Եվ ոչ ստեղծող
Իրավունք չունի
Գործել ինքնիշխան...[25]։

Աղայանը հաստատում է, որ աստված ստեղծված է մարդու կողմից, նրա «տհաս խելքով և երևակայությամբ»։ Սակայն Աղայանի աշխարհայացքի հակասությունները, անշուշտ, անդրադարձել են նաև նրա հակակրոնական հայացքների վրա։ Մի կողմից նա հաստատում է, որ հավատը գերբնական ուժերի նկատմամբ ոչ մի առնչություն չունի գիտության հետ և համարում է մարդու տհաս մտքի արդյունքը, իսկ մյուս կողմից երազում է երկինքը իջեցնել երկրի վրա և նրա օգնությամբ պայքարել սոցիալական անարդարությունների դեմ։

* * *

Ըմբոստանալով կապիտալիզմի և նրա բարբարոսական օրենքների դեմ, Աղայանը ոչ միայն քննադատել է տիրող անարդար կարգերը, այլև միաժամանակ երազել է լավագույն և արդար կարգերի ստեղծման մասին։ Մասնավոր սեփականությունը նա համարել է բոլոր չարիքների աղբյուրը, ցույց է տվել, որ մարդկության ապագան, նրա առաջընթացը, կապված է մասնավոր սեփականության վերացման և համայնականի հաստատման հետ։ Դեռևս 1893 թ. Աղայանը լավատեսությամբ հուսացել է, որ «երկրի վրա կտիրե ընդհանուր եղբայրություն, փոխադարձ սեր և հարգանք»։ Այստեղ ուշադրավ է նրա այն կարծիքը, թե «մարդն այս աստիճանին հասնել կարող չէ առանց կռվի», թե «այս կռվի մեջ նա կհանդիսանա հաղթող... իսկ կջախջախվի նա, ով որ հակառակ կհանդիսանա դրան, թեկուզ ըստ երևույթին նա շատ զորեղ թվա»[26]։ Այս առաջավոր գաղափարները իրենց հետագա զարգացումն են գտնում «Քյոռ-օղլի», «Երկու քույր» և այլ երկերում։ «Տորք Անգեղ» պոեմում և հատկապես «Ժամանակակից ատենախոսություն» աշխատության մեջ Աղայանը հանգել է այն եզրակացության, թե «ընդհանուրի շահը ընդհանուր սեփականության մեջ է գտնվում»[27]։

Որպես դեմոկրատ-լուսավորիչ, Աղայանը հասարակության զարգացման աղբյուրը համարել է գիտությունը և լուսավորությունը։ Սակայն մենք չենք կարող անտեսել, որ նա կարողացել է հասկանալ նաև տնտեսականի դերը այդ խնդրում։ «Ժողովրդի բարոյական վիճակը,—գրել է նա,—նրա տնտեսական վիճակից կախում ունի, իսկ տնտեսական բարեկեցությունը՝ նրա համայնական սեփականությունից։

Մի հասարակության մեջ որքան շատ ու բազմատեսակ լինեն ընդհանուրին պատկանող սեփականություններն ու հաստատությունները, նույն չափով բարձր կլինի նրա բարօրության աստիճանը և նույն չափով սակավ չարիք կգործվի նրա մեջ։ Կարճ ասել՝ համայնքի բարեկեցության և երջանկության աղբյուրը նրա ընդհանուր սեփականությունից կարող է բխել»[28]։

---

25 «Սուրհանդակ», 1909, № 35։
26 Ղ. Աղայան, Երկեր, հատ. 3, էջ 120։
27 Ղ. Աղայան, Ժամանակակից ատենախոսություն, էջ 44։
28 Նույն տեղում։

Աքսորավայրում եղած ժամանակ Աղայանը հրապուրվել էր ամերիկացի ուտոպիստ գրող Էդուարդ Բելամիի «Հարյուր տարուց հետո» գրքով. նա նույնիսկ փորձել է թարգմանել այն։ Մենք ամենևին էլ մտադիր չենք ժխտելու Բելամիի թողած ազդեցությունը Աղայանի վրա, բայց արդարությունը պահանջում է նշել, որ իր համայնքի սոցիալական գաղափարները նա ավելի շուտ ընդօրինակել է Բելինսկուց, Չերնիշևսկուց, Նալբանդյանից, որոնց աշխատություններին, հատկապես Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» գրքին, լավ ծանոթ էր։ Նա «Երկրագործությունը» համարել է «սոցիալական որոշակի սկզբունքներով»[29] գրված աշխատություն։

Որո՞նք են Աղայանի սոցիալական ուտոպիայի բնորոշ գծերը։

Նրա կարծիքով համայնքի սեփականության կողքին (ջրաղացները, անտառները, եկեղեցու եկամուտը, օգուտ գործարանները և այլն) յուրաքանչյուր գյուղացի պետք է մշակի միայն իր սեփական հողամասը։ Սակայն համայնական և մանր-մասնավոր սեփականության միատեղ գոյությունը նա թողնում է միայն սկզբնական շրջանում, իսկ հետագայում ամբողջապես վերացվում է մասնավոր սեփականությունը և հաստատվում տնտեսական հավասարություն։

Գյուղական համայնքում համայնքի բոլոր անդամներն էլ աշխատում են, զբաղվելով հողագործությամբ և արհեստով։ Որպես աշխատանքային դաստիարակության միջոց, աշակերտները պարտադիր կերպով սովորում են որևէ արհեստ։ Այստեղ բոլոր կանայք ազատագրված և զրագետ են։ Գյուղն ունի մաքուր, լայնարձակ և ծառազարդ փողոցներ, հիվանդանոց, գեղատուն, փոստ. հեռագրատուն, տպարան և սքանչելի դպրոց՝ երկու սեռերի համար։

Համայնքն ունի նաև դատավոր, բայց նա համարյա թե չի զբաղված իր հիմնական գործով, քանի որ մասնավոր սեփականության բացակայության շնորհիվ համայնքում տեղ չունեն շահագործումը, խաբեբայությունը և անբարոյական արարմունքը։

Այսպիսով, այն խոր ըմբռնությունը, որը տարիներով կուտակվել էր Աղայանի մոտ ընդդեմ ցարական կարգերի, զարթեցրեց նրա մեջ սոցիալիստական գաղափարներ, նա ելք էր փնտրում այդ չարիքները վերացնելու և ժողովրդի դրությունը բարելավելու համար։

Սոցիալական ուտոպիայի գաղափարները Աղայանը պրոպագանդել է այն ժամանակ, երբ նրանք ապրել էին իրենց դարը, երբ սոցիալիզմը ուտոպիայից դարձել էր գիտություն, երբ Մարքսի ու Էնգելսի գիտական սոցիալիզմի ուսմունքը տարածվում էր Ռուսաստանում և Հայաստանում։ Աղայանը իր ժամանակին հետաքրքրվել է Մարքսի և Էնգելսի ուսմունքով և որպեսզի հասկանա նրանց, դիմել է օժանդակ գրականության, միամտորեն կանգ առնելով ամերիկյան ուտոպիստ Էդուարդ Բելամիի վրա։ Այդպես էլ նա չկարողացավ հասկանալ գիտական և ուտոպիական սոցիալիզմի տարբերությունը։ Աքսորավայրից Հ. Թումանյանին ուղարկած նամակում Աղայանը գրել է, որ մտադիր է թարգմանել Բելամիի վեպը, որ Մաքսի և Էնգելսի ստեղծագործությունները մատչելի չեն իրեն։ «Ընթերցելով Բելամիի գիրքը -գրել է Աղայանը,—կարելի է յուրացնել այն բոլորը, ինչ ասել են Մարքսը և Էնգելսը ու նրանց նման հեղինակները»[30]։

Թեև Աղայանը սոցիալական ուտոպիայի մասին խոսել է բավական ուշացումով, այնուհանդերձ նրա արտահայտած մտքերն ունեցել են առաջադիմական նշանակություն հայկական պայմաններում այն նկատառումով, որ նա պեսիմիզմի գիրկը չի ընկել, այլ հավատացել է ժողովրդի ուժին։ Մեծ օպտիմիստը հաստատ հավատում էր, որ աշխարհի երեսից կվերանան բոլոր անարդար կարգերը և հանուր մարդկության համար կգա երջանիկ ապագան՝ իր շողշողուն և լուսափայլ ճառագայթներով։ «Եվ իմ աչեր չպիտի մայր մտնի,—գրել է Աղայանը,—մինչև չտեսնեմ արդարությունը վերականգնված իր լուսափայլ ճառագայթներով, մինչև չտեսնեմ եղլխյա օչափը ջախջախված, քարացած քաղաքը շունչ առած»[31]։

Բայց Աղայանը ի վիճակի չէր հասկանալու, որ միայն կապիտալիզմի զարգացումը և բանվոր դասակարգի համախմբվածությունն ու կազմակերպվածությունը կարող են հող ստեղծել սոցիալիզմի հաղթանակի համար։

* *

Ուշագրավ են նաև Աղայանի արտահայտած մտքերը պատմության մեջ ժողովրդական մասսաների և անհատների դերի մասին։ Նա ընդհուպ մոտենում է այս հարցի գիտական լուծմանը։

---

29 «Հայ գրողներ», 1910, Նալբանդյանի կենսագրական տեղեկությունները՝ գրված Աղայանի կողմից։

30 «Գրական ժառանգություն», Ղ. Աղայանի նամակը Հ. Թումանյանին 20/X 1898։

31 Ղ. Ա ղ ա յ ա ն, Երկեր, հատ. 4, էջ 269։

Ահա թե ինչ է գրել նա 1894 թ. «Մեծ մարդկանց մասին» իր հոդվածում. «...Մեծ ազգի գավակները որքան էլ որ մեծ լինեն, գլուխ են իջնարհում ժողովրդի առջև և իրենց գործունեությունը նրա առաջադիմության նվիրում»։ Կամ՝ «Մեծ պետք է համարել այն անհատներին, որոնք աշխատում են ժողովրդին ազատել այդ խավարի արբանյակներից և առաջնորդել նրան դեպի լույս ու ճշմարտություն, դեպի բարին և կատարյալը»[32]։ Մի ուրիշ հոդվածում էլ այն միտքն է հայտնում, թե այդ մեծ մարդիկ, որոնք ծնունդ են հասարակության վերին խավերի, «իջնում են դեպի ցածր խավերը, որպեսզի բարձրացնեն նրանց»[33]։

Ճիշտ դնահատական տալով ականավոր անհատների գործունեությանը, Աղայանը դրանով իսկ ճիշտ է հասկացել ժողովրդական մասսաների դերը պատմության մեջ։ Չհամաձայնվելով Բաֆֆու «ժամանակը գտնվում է պոետների ձեռքին» տեսակետի հետ, Աղայանը առարկել է. «Ո՛չ։ Բանաստեղծը մի շատ համեստ մարդ է. նա յուր ժամանակի «խալխի նոքարն է», նրա թերությունների պախարակողը, նրա արժանավորությունների գովողը... Բանաստեղծը ժողովրդի լեզուն է, նրա սրտի հայտարարն ու թարգմանը։ Վերջապես բանաստեղծը ժողովրդի ծնունդն է և ոչ ժողովուրդը՝ բանաստեղծի»[34]։ Այնուհետև Աղայանը ամփոփում է իր այդ տեսակետը, ասելով. «Մի՞թե մեկ մարդ կարող է պվելի մեծ լինել, քան թե մի ամբողջ ժողովուրդ, քան թե ամբողջ մարդկությունը»[35]։ Իսկ «Մի երես մեր նորագույն պատմությունից» աշխատությունում (1890) ըմբոստանալով Ներսես կաթողիկոսի անարդարությունների դեմ, նա ավելի է զարգացնում իր այդ առողջ մտքերը. «Ով որ իրան ազգից բարձր է համարում և իշխում նրա վրա, այնպիսին մի կուռք է, որին պետք է կործանել, այլ ոչ պաշտպանել»[36]։

Մերկացնելով ոնակցիոն կղերականության դաղափարախոս Բարրիել Այվազովսկու մտքերի սնանկությունը մեզ հետաքրքրող հարցում, Աղայանը գրել է. «Ճշմարիտ առաջնորդը նա է, որը ժողովրդի առաջը չի կտրիլ, նրան չի կանգնեցնիլ իր քիմքի ուղած տեղում, այլ կերթա նրա հետ ձեռք-ձեռքի տված, համախոհ և համամիտ առաջադեմ մտքի տեր եղող մարդկանց հետ»[37]։

Չնայած որ Աղայանը առանձին անհատների և ժողովրդական մասսաների դնահատման ժամանակ հանդում է մատերիալիստական որոշ եզրակացությունների, սակայն դա դեռևս չի խոսում այն մասին, որ նա հասարակության պատմության ընթացքը ըմբռնել է մատերիալիստորեն։ Այս հարցում ևս Աղայանի մոտ կան հակասություններ։ Նա արտահայտել է ոչ ճիշտ տեսակետներ մեծ անհատների մասին. «Մեծ մարդը մեծ կիրք ունեցողն է»[38], և դա «տիեզերական և անսխալ» օրենք է[39]։ «Մեծ մարդ լինել և փառասեր չլինել՝ անկարելի է և անբնական»[40]. «Պատմությունը ցույց է տալիս մեզ, որ ամենամեծ մարդիկը գործում են և մեծամեծ խայտառակություն և չարագործություն»[41]։

Հայտնի է, որ պատմության մատերիալիստական ըմբռնումը պահանջում է ընդունել հասարակական կեցության առաջնայնությունը և հասարակական գիտակցության ածանցյալ լինելը։ Այս հարցում կատարելով մի շարք ճիշտ ենթադրություններ, Աղայանը, այնուամենայնիվ, սոցիոլոգիայի բնագավառում կանգնած էր իդեալիզմի դիրքերում։

---

32 Ղ. Աղայան, Երկեր, հատ. 3, էջ 376։
33 Տե՛ս «Աղբյուր», 1890, № 3։
34 Ղ. Աղայան, Երկեր, հատ. 3, էջ 266—267։
35 Տե՛ս «Արարատ», 1869, հունիս, էջ 27։
36 Ղ. Աղայան, Երկեր, հատ. 3, էջ 295։
37 Նույն տեղում, էջ 47։
38 Ղ. Աղայան, Երկեր, հատ. 4, էջ 372—373։
39 Նույն տեղում։
40 Նույն տեղում, էջ 373։
41 Նույն տեղում, էջ 376։

К ВОПРОСУ О ФИЛОСОФСКИХ И СОЦИОЛОГИЧЕСКИХ ВОЗЗРЕНИЯХ Г. АГАЯНА

А. Н. АВТАНДИЛЯН

(Резюме)

В трудах, публицистических статьях, мемуарах и письмах известного армянского писателя и педагога Газароса Агаяна рассматривается комплекс интересных педагогических, филологических, социологических и философских вопросов. В настоящей статье дано краткое изложение некоторых социологических и философских воззрений Агаяна, анализируется его точка зрения о соотношении бытия и сознания, взгляды по теории познания, этике и эстетике.

Колебания между идеализмом и материализмом, наличие элементов электицизма, несомненно, говорят о слабых сторонах мировоззрения Агаяна; однако он всячески старался отойти от идеализма и мистики. Все же несмотря на то, что у Агаяна имеется ряд верных положений, он не сумел окончательно избавиться от идеалистических оков и выступить как последовательный материалист.

В связи с философскими и социологическими воззрениями Агаяна в статье показывается также его борьба против духовенства.

Как демократ-просветитель, Агаян основным фактором общественного развития считал науку и просвещение. Однако характерно и то, что он смог понять значение экономического фактора. «Моральное состояние народа,—писал Агаян,—зависит от его экономического состояния, а экономическое благополучие—от его общественной собственности».

В статье анализируется социальная утопия Агаяна, рассматриваются его высказывания о роли личности и народных масс в историческом развитии. Делая ряд правильных и ценных предположений по этим вопросам, Агаян тем не менее и в вопросах социологии стоял на позициях идеализма.